



ՌՈՒԹԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՎԱԳ ՇԱԲԱԹԸ ԵՎ ԶԱՏԿԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ

29 մարտի, Մաղկազարդ

Կիրակի առավոտյան սկսվում է հանդիսավոր ժամերգությունը: Ժողովրդի բազմությունը լցվել է եկեղեցու ներսը: Ողջ միաբանությունը, տոնականորեն զգեստավորված, մասնակցում է արարողությանը:

Սեղանները դարդարված են դալար ուտենու ձյուղերով. Բրիստոսի Նրուսաղեմ գալստյան տոնն է:

Բրիստոնեության հաղթությունից հետո, այդ տոնը իր մեջ դեռ պահեց հեթանոսության մի շարք սովորություններ. այս առիթով ասենք, որ Մաղկազարդը հնում գարնան ծիլ ու ծաղկի տոնն է հանդիսացել:

Տաճարում ժամերգությունը իր ընթացքի մեջ է: Իրար են հաջորդում ավետարանների և գրքերի ընթերցումը: Ուրախ շարականների ելևէջները զվարթացնում են բոլորին: Ամբողջ Տաճարը պայծառորեն լուսավորված է: Առավոտյան ժամերգությունից հետո, հավատացյալները, երիտասարդ թե ծեր, դուրս են գալիս Տաճարից ուտենու դալար ձյուղերը ձեռքներին. բոլորի դեմքերը ուրախ-զվարթ տրամադրություն են արտահայտում:

Կեսօրին տեղի է ունենում հանդիսավոր սուրբ պատարագ: Զանգակատան զանգերը ղողանջում են մեղմորեն: Դրսում պայծառ, ուրախ օր է: Միաբանների մի մասը, զգեստավորված, արդեն սպասում է Վեհարանի բակում: Եվ ահա աստիճաններից իջնում է ծերունազարդ Հայրապետը, ծաղկյա փիլոնը ուտենին: Թափորը զգաստանում է, ուղղվում է առաջ շարժվում: Զանգերի ղողանջը ավելի ուժեղ է հավատացյալներին Վեհի դալուստը:

Մերունազարդ Հայրապետը Ս. Իջման սեղանի առաջ է և իր սովորական աղոթքներն է մրմնջում: Բնից կարդում են «Հաւատամք»ը: Վեհը բազմում է իր դահին: Պատարագը շարունակվում է: Ամբողջ պատա-

րագի ընթացքում Վեհը լուռ աղոթում է, երբեմն ծնրադրում: Գահի հետևում կանգնած է վարդապետներից մեկը՝ բարձրացրած ունե-նալով հայրապետական ասան: Երգեհոնի հնչյունները խառնվում են դպիրների ախորժալուր երաժշտության և ամբողջ Տաճարը լցվում է մի ներդաշնակ երգեցողությամբ:

«Հայր մեր»ից առաջ օրվա պատարագի գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը հավուր պատշաճի քարոզում է. նա նկարագրում է Բրիստոսի հանդիսավոր մուտքը Նրուսաղեմ, վեր է հանում նրա մարդասիրությունն ու ժողովրդականությունը: Պատարագից հետո նույն հանդիսավորությամբ թափորը շարժվում է եկեղեցուց դուրս: Անհնարին է շարժվել. ժողովուրդը խռնվել է ճանապարհին, ամեն ոք ուղում է մոտենալ Վեհին, նրա Ս. Աջը համբուրել:

Երեկոյան տեղի է ունենում հանդիսավոր «Դոմբացեք»ը: Դեռ Տաճարի զանգերը չխփած, ժողովուրդը հավաքվել, սպասում է: Զանգերը խփում են: Գալիս են միաբանները: Հանդիսավորապես Տաճար է իջնում Վեհը: Սկզբում է երեկոյան հանդիսավոր ժամերգությունը: Մի պահ, ատյանում, ծունկի է դալիս ողջ միաբանությունը: Վեհափառը նստել է մեջտեղում դրված աթոռին: Գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը, լրիվ զգեստավորված, բարձրացել է արդեն վարագույրներով ծածկված Ս. Իջման սեղանը: Ավագ քահանաներից մեկը, շուրջառազգեստ, մի մեծ բաշալի ձեռքին, ներքևում ողբագին ձայնով աղերսագին երգում է. «Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց մեզ, Տէ՛ր, զղուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ»: Ամբողջ Տաճարում քար լուծվում է տիրում: Ներսից լսվում է պատասխանը. «Ո՛վ են սոքա զի բացից, զի այս դուռն Տեառն է, և արդարք մտանենք ընդ սառ: Եվ այսպես շարունակվում է մինչև վերջ:

Դպիրների «Ձողորմութեան քո զգուռն բաց մեզ»... շարականի երգեցողության տակ բացվում են Տաճարի վարագույրները: Կարդում են վերջին ավետարանը, «խնդրեսցուք», «կեցցո» և վերջանում են հանդիսավոր օրվա գեղեցիկ արարողությունները:

2 ապրիլի, Ավագ Հինգշաբթի

Ցերեկը տեղի է ունենում հանդիսավոր սուրբ պատարագը:

Սեղանի վարագույրները փակ են: Ներքևվում դպիրները սաղմոս են քաղում, կարդում են ծննդոց գիրքը. գրքերից, ավետարաններից հետո երգում են «Այսօր կանգնեցաւ» հրաշալի շարականը:

«Հաւատամք»ի ժամանակ բաց են անում վարագույրը և Ս. Պատարագը ընթանում է իր հունով: «Հայր մեր»ից առաջ միաբաններից ավագադուլը բարձրանում է բեմ և կարդում Ս. Բարսեղի աղոթքը: Պատարագը մոտենում է իր ավարտին, հաղորդվողները բավականին շատ են: Օրվա պատարագիչն էր Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը:

Երեկոյան կատարվում է Ռոնալվայի կարգը: Հավատացյալների շտեմնված բաղմություն է լցվել Տաճարը: Զատկական այս նվիրական ու հետաքրքիր օրերին, շրջակա հայ գյուղերի հավատացյալները, անկախ նրանից, թե նրանք գյուղում եկեղեցի ունեն թե ոչ, ուղում են անպայման Մայր Աթոռում լինել:

Երեկոյան, հանդիսավոր թափորով Տաճար է մտնում Վեհափառ Հայրապետը: Ավագ սեղանի վարագույրը փակ է: Բեմի առջևում շարում են խորհրդավոր լվացման սպասները, յուզը և այլն:

Վարագույրը բացվում է: Լուսավորված սեղանի աջ և ահյակ կողմերում հանդիսավոր զգեստավորված կանգնել են միաբանները, դպիրները սաղմոս են քաղում, ավագադուլն եպիսկոպոսը 50 «Տէ՛ր, ողորմեա՛» է արտասանում: Կարդալով համապատասխան աղոթքը, ջուրը խաշանման լցնում են կոնքը, ապա սկսում է մեկ առ մեկ մարգարեությունների ընթերցումը: Այնուհետև Հովհաննես վարդապետի գրած քարոզն են կարդում՝ «Աստուած սէր է»: «Սիրտ իմ սասանի» տաղի հնչյունները անմասն խորհրդավորությամբ լցնում են Տաճարը: Ապա սկսում է յուզի և ջրի օրհնությունը: Տյառնագրությամբ և «Վերածգողն երկնից» շարականի իմաստալից հնչյունների ներքո, գերաշնորհ Սահակ սրբազանը ծնկի եկած խոնարհությամբ, օրինակ Քրիստոսի, իրար ետևից լվանում է միաբանների ոտքերը և օծում յուզով: Մի անմասն տեսարան է բացվել հավատացյալների աչքի առջև, այն, ինչ քարոզվում է, այդ իսկ վեհ ըոպեին

կենդանի օրինակով կանգնում է հավատացյալի աչքի առջև, նրա սրտում առաջ բերելով խոնարհության և սիրո անմասն հույզեր:

Արարողություններից հետո հավատացյալները մոտենում են յուզի կոնքին, ստանալու օրհնված յուզի մասնիկը:

Գիշերը հսկում է տեղի ունենում: Սկերտված ծածկված Ավագ սեղանի վրա վառվում է 12 մեծ մոմ: Սկսվում է սաղմոսերգությունը: Օգտնմ թրթռում են «Առաւօտ լուսոյ»ի կերկրուն հնչյունները: Ապա կարդում են Քրիստոսի մարդեղություն, խաչելության նվիրված 6 ավետարանները, մեջընդմեջ երգվում են Հայոց Եկեղեցու այնքան դուրեկան և իմաստալից շարականները: մեկ առ մեկ յուրաքանչյուր ավետարանի վերջանալուն հետ հանգցվում են մոմերը: Տաճարում տիրում է խորհրդավոր մթություն: Խավարի մեջ լսվում են «Փառք ի բարձունս»ի մեկտեղի հնչյունները: Երանանկվում է առավոտյան ժամերգությունը:

Եվ այսպես, մինչև ուշ գիշեր, Տաճարը լի է ջերմեռանդ հավատացյալներով: «Փառք սուրբ խաչիդ» երգակցության հնչյուններով վերջանում են հանդիսավոր արարողությունները: Բոլորը ցրվում են իրենց տները:

3 ապրիլի, Ավագ Ուրբաթ

Ուրբաթ առավոտյան շարունակվում են Հիսուսի մատնություն, շարժարանաց նվիրված գրքերի, ավետարանների, շարականների ընթերցումն ու երգեցողությունը:

Անշափ հետաքրքիր է Ավագ Ուրբաթ երեկոյան Քրիստոսի թաղման կարգի ծիսակատարությունը: Տաճարը լի է աղոթողներով: Ժամերգությունը սկսվում է սովորական «Խոնարհեցո» և «Ապրեցո» սաղմոսներով: Ս. Իշման սեղանի առաջ, սպիտակ դաստառկով ծածկված սեղանի վրա, դրած են Քրիստոսի թաղումը ներկայացնող նկարներ: Մեղմորեն առկայծում են մոմերն ու կանթեղները, հնչում են թաղման տխուր ու մեղամաղձիկ շարականները, երգերը՝ «Պարգեւատուն ամենեցուն» և այլն: «Ս. Աստուած... որ խաչեցար» երգելու ժամանակ ամբողջ իմարանությունը ատյանում ծնկալոք աղոթում է, շոքել է ծերունազարդ Հայրապետը:

Ժամերգությունը վերջանում է, հավատացյալները մեկ առ մեկ մոտենում են սեղանին, համբուրում նվիրական սրբությունները և հանդարտ դուրս գալիս Տաճարից:

4 ապրիլի, Ավագ Շաբաթ

Երեկո է, ծրագալույց Հարություն: Տաճարը լի է աղոթողների բաղմությամբ: Վարագույրը փակ է: Ասում են ծաշու երեք «Տէ՛ր, ողորմեա՛»ները, կարդում մարգարեություններ,

գրքեր և այլն: «Լուսատրեա՛, Երուսաղէ՛մ» շարականի հնչյունների տակ, Տաճարը միանգամից լուսավորվում է. կարդում են «Դանիէլի գիրք»ը: Տաճար է մտնում հանդիսավոր թափորով Վեհափառ Հայրապետը: Լսվում է դպիրների մեղմարուր ձայնը՝ «Օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք և բա՛րձր արարէ՛ք զնա յաւիտեան»: Ուրախ դողանջում են Տաճարի զանգերը: Շուտով բացվում է սեղանի վարագույրը: «Օրհնեա՛, Տէ՛ր», լսվում է սարկավազի ձայնը. պատարագը տկավում է: Հավատացյալները հոգեկան անպատմելի ցընծության մեջ են: Բոլորը աղոթում են տարված օրվա հանդիսավորությամբ, բարձրանում են աղոթքի մրմունջները:

Այսօր, այս խորհրդավոր երեկոյան, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», մարդիկ իրար են շնորհավորում: Արձակվում է սուրբ պատարագը: Հավատացյալների խուռն բազմությունը թույլ չի տալիս, որ Վեհը դուրս գա Տաճարից, ամեն ոք ուզում է իր Հայրապետի

Աջը առնել և շնորհավորել նրա Զատիկն ու Քրիստոսի Հարությունը: Մինչև ուշ գիշեր Տաճարը բաց է, անընդատ գալիս են հավատացյալների նորանոր խմբեր, մտնում Տաճար աղոթելու:

5 ապրիլի, կիրակի, «Յարութին Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի»

Հանդիսավոր սուրբ պատարագ է: Ժամաւորան է գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը: Տաճարում անթիվ բազմություն կա: Տոթ է: Պատարագը շարունակվում է: Եպիսկոպոսը հավուր պատշաճի քարոզում է, վեր է հանում Քրիստոսի Հարության նշանակությունը, բացատրում, ոգևորում մարդկանց:

Տաճարից դուրս տասնյակ տեղերով ծովան է բարձրանում. այդ հայ հավատացյալն է, որ վաղեմի սովորությամբ իր մատաղն է կտրում: Բազմությունը ալեկոծվում է դրսում:

«Շնորհավոր Զատիկ և Հարություն», հավատացյալ եղբայրներ և քույրեր:

